ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ N 9422 ՁԵՌԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐՆ ՈՒ ԱՆՎԱՆԱԹԵՐԹԵՐԸ

ՉՈՒԳԱՍԶՅԱՆ Ս. Լ.

Թորոս Ռոսլինին հաջորդած մանրանկարիչների երկերի մեջ բացառիկ տեղ է գրավում Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի N 9422 Ավետարանը: Այս ձեռագրի մանրանկարները անմիջապես հմայում են դիտողին իրենց արտակարգ գեղեցկությամբ և գեղարվեստական լեզվի կատարելությամբ՝ առաջնորդելով դեպի հեքիաթային հրապույրների մի աշխարհ:

Այս Ավետարանի հարդարանքում առանձնակի նրբությամբ են արված լուսանցազարդերը, որոնք գույնզգույն են, երբեմն ոսկով եզրագծված, իսկ կենտրոնում նշված է բնագրի տվյալ գլխի թվահամարը՝ արտահայտված տառերով[1]: Վերջիններս հիմնականում ոտնուկի վրա ուղղահայաց հորինվածք ունեցող բուսական տարրերից (հաճախ արմավատերևներից), փշաձև ելուստներից ու «բեղիկներից», երբեմն նաև բողբոջներով, երբեմն նուռ հիշեցնող, առավելապես երկմաս կամ եռամաս կառուցվածք ունեցող նախշային հյուսվածքեր են: Այս կարգի լուսանցազարդերի մեջ կան օրինակներ, որոնք ունեն կենտրոնում սրտաձև, շրջված զարդանախշ՝ խաչի հորինվածքը ընդգծող կառուցվածքով, ինչպես նաև հյուսածո վարդյակի տեսք: Ուղղահայաց լուսանցազարդերից բացի, այս մատյանում կան նաև շրջանի շուրջ գալարաձև պտտվող, բուսական տարրերից բաղկացած կամ հորիզոնական կառուցվածքով նախշեր՝ առատության եղջյուրների հարևանությամբ, որոնցից դուրս են գալիս բույսերի ցողունները: Վերջիններս հիմնականում միահյուսվում են սկզբնատառեր-զարդագրերին: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև ընթերցվածների սկիզբը նշող գույնզգույն և հյուսածո սկզբնատառերի հարդարանքը: Սրանց մեջ կան նաև թռչնագիր նմուշներ, որոնք բաղկացած են նուրբ, երկար, կարմիր կտուցներով արագիլներից կամ փոքրիկ թռչուններից, որոնք իրենց կարճ, կարմիր կտուցներում բույսեր են բռնել և կենդանագիր օրինակներ՝ հիմնականում կատվազգի, երբեմն իրար դեմ դիմաց ցուցադրված կենդանիներ, երբեմն էլ վիշապի պատկերներ: Դրանց գերակշռող մասը ներկայացնում են Ե տառի զարդարված տարատեսակները:

Խիստ ինքնատիպ, հարուստ զարդանախշերով և տեսակ-տեսակ մոտիվներով են հագեցված նշված Ավետարանի անվանաթերթերը: Մատթեոսի անվանաթերթի (թերթ 20ա) ճակատազարդի շրջանակը զարդարված է քառաթև, բազմերանգ ծաղիկներով, իսկ ներսի տարածությունը ծածկված է բուսական զարդանախշով, որի մեջ երևում են եկեղեցական ոսկեզօծ վեղարներ հիշեցնող գլխարկներով մարդկային դեմքեր: Գլխարկի այդ տեսակը զարմանալիորեն նմանվում է Հռոմի պապերի թագին: Անվանաթերթում պատկերված մարդկային դեմքերից յուրաքանչյուրը

---

[1] **Կարագյոզյան Հ., Կորխմազյան Է.,** *Զարդատառեր, Ե., 1992:*

հայտնվում է եռամաս բացվածքների ներսում, որոնք իրար են միահյուսված բուսական ու ծաղկային զարդերով: Դեմքերը գետեղելով յուրահատուկ, ասես բույսերից ու ծաղիկներից ստեղծված պարտեզի մեջ՝ անծանոթ մանրանկարիչը իրականացրել է աչքի համար արտակարգ լարվածություն պահանջող այնպիսի մի մանրակրկիտ, գրեթե ոսկերչական աշխատանք, որը շատ քիչ վարպետներ կարող են կատարել: Գլխազարդի ներքևում եռաթև, կամարաձև բացվածք կա, որին արձագանքում են հորինվածքի ներսում երևացող վերոհիշյալ եռամաս բացվածքները: Ճակատազարդի ներսում հաստ շերտով տեղադրված ոսկու շնորհիվ ողջ հորինվածքը «ռելիեֆային» տեսք է ստանում: Այս շքեղ ու բարդ հորինվածքով ուղղանկյունը ոսկերչական բծախնդիր աշխատանք է հիշեցնում, որին ավելի վառ հնչերանգ է հաղորդում առատ ոսկու և վառ կարմրի համադրությունը:

Ճակատազարդի շրջանակը ուղղանկյան վերևում շրջան է ստեղծում, որի մեջ Քրիստոս Էմմանուէլի[2] պատկերն է ցուցադրված: Ըստ Է. Վարդանյանի, հայկական ձեռագրերում Քրիստոս Էմմանուէլի պատկերով մեդալիոնը ներկայացվում է Սուրբ Հոգու ներգործությամբ իրականացված՝ Հիսուսի մարդեղացման գաղափարը շեշտելու համար: Այսպիսով, մեդալիոնի մեջ Քրիստոս Էմմանուելը կարող է մեկնաբանվել որպես Սուրբ մեռոնի ներգործությամբ ստացված՝ Աստծո շնորհների մարմնավորված պատկեր[3]:



Մեր մանրանկարում Քրիստոս Էմմանուելի առջև խոնարհվում են նրա կողքերին՝ շրջանակից դուրս, ծնկի իջած և բուրվառները ձեռքերում բռնած հրեշտակները: Ըստ Ս. Մանուկյանի, այս լուսավոր (ոսկե) և գունային ողջ հորինվածքը պսակող Քրիստոսի պատկերը փառաբանում է Նոր Կտակարանի հաղթանակը[4]:

---

[2] Եսայու մարգարեությունից (Է 14, տե՛ս նաև **Մատթեոս,** Ա 23) վերցված Էմմանուէլի անվան բառացի թարգմանությունն է՝ «Աստված մեզ հետ է»: Այս մասին տե՛ս **Վարդանեան Է.,** Դրուագ Քրիստոս Էմմանուէլի պատկերը կրող մեդալիոնով Տիրամօր պատկերագրութիւնից (Հանդէս Ամսօրէայ, հայագիտական ուսումնաթերթ, յունուար-դեկտեմբեր, 2004, N 1-12, էջ 243):

[3] **Վարդանեան Է.,** նշվ. աշխ., էջ 254:

[4] **Манукян С.** *Рубрикации в художественной системе армянских рукописных Евангелий. Диссертация на соискание степени кандидата искусствоведения по специальности 17.00.03 “Изобразительное искусство, декоративное и прикладное искусство, дизайн”, Е., 2008, с. 121.*

Մատթեոսի անվանաթերթի աջ լուսանցքում Հեսսեի ծառի՝ Հիսուս Քրիստոսի տոհմածառի[5] այլաբանական նկարագրությունն է ներկայացված[6]: Ծառի վերևում՝ կապույտ ճաճանչապսակի (մանդորլայի) մեջ, պատկերված է սպիտակ հանդերձանքով Հայր Աստվածը, ապա՝ Քրիստոսը, որի կրծքավանդակի հատվածում՝ ոսկեգույն սկավառակի մեջ սպիտակ աղավնին (Ս. Հոգի) է նկարված[7]: Քրիստոսից ներքև Տիրամայրն է՝ ավանդական հագուստներով, ապա՝ Դավիթ և Սողոմոն թագավորները: Ծաղկողը մանրամասն պատկերել է նրանցից յուրաքանչյուրի ոչ միայն դեմքը, այլ նաև թագավորների թագերը: Տոհմածառի ներքևում՝ կարմիր բարձի վրա, գլուխը ձեռքին հենած՝ քնած է տոհմի նախահայրը՝ Հեսսեն[8]: Հակ կողմում ծառի ողջ երկայնքով տասնմեկ մարգարեներն[9] են պատկերված՝ բաց կամ փակ գալարափաթեթները ձեռքերին:

Քրիստոսի տոհմածառը[10] ներկայացնող տեսարանը առավել տարածված է եղել Արևմտյան Եվրոպայի արվեստում, մասնավորապես ռոմանական և գոթական շրջաններում՝ մանրանկարչության, վիտրաժի և քանդակագործության մեջ[11]: Բյուզանդական արվեստում այն հայտնվում է մասնավորապես Պալեոլոգների օրոք[12] և ներկայացվել է միայն մոնումենտալ գեղանկարչության հուշարձաններում[13]: Մանրանկարչության մեջ Հեսսեի ծառի պատկերը հաճախ է հանդիպում XII-XIII դդ. անգլիական ձեռագրերում[14] [օրինակ, Աստվածաշնչի հարդարանքում (Փիերփոնթ Մորգան գրադարան, MS 724)]: Այստեղ, ի տարբերություն հայկական օրինակի, ծառերը ավարտվում են Քրիստոսի պատկերով:

Ս. Տեր-Ներսեսյանը այս թեման ներկայացնող հայկական մանրանկարները[15], ըստ պատկերագրության՝ բաժանում է երկու խմբի: Առաջինում Քրիստոսը միայնակ է, պատկերված է ծառի վերևում, իսկ երկրորդում Սուրբ Երրորդությունն է

---

[5] *Այս տեսարանը հիմնված է հինկտակարանային մարգարեության վրա (Եսայի, ԺԱ, 1-3): Տե՛ս նաև* **Ross L.** *Medieval Art: A Topical Dictionary, London, 1996, p. 248-249.*

[6] *Ըստ Գ. Շիլլերի, քնած Հեսսեի պատկերագրական տարբերակը կարող է վերցված լինել Հակոբի երազը ներկայացնող հուշարձաններից (տե՛ս* **Schiller G.** *Iconography of Christian Art, Vol. I, London,1971, p. 17).*

[7] **S. Der Nersessian,** *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, Vol. I, II, Washington, D. C., 1993 ,fig. 430.*

[8] **Մնացականյան Ա.,** *Հայկական զարդարվեստ, Ե., 1955, էջ 637:*

[9] *Մարգարեներից առանձնանում է Քրիստոսի մոտ պատկերված Հովհաննես Մկրտիչը, որը ներկայացված է իրեն բնորոշ պատկերագրությամբ և ցնցոտիներով:*

[10] *http://www.aug.edu/augusta/iconography/jesse.html*

[11] **Ross L.** *նշվ. աշխ., էջ 248-249:*

[12] *The Oxford Dictionary of Byzantium, Vol. 3, Oxford,1991, p. 2113.*

[13] **S. Der Nersessian**, *նշվ. աշխ.:*

[14] *Տե՛ս* **The Pierpont Morgan Library.** *Exhibition of Illuminated Manuscripts Held at the New York Public Library, Introduction by Charles Rufus Morey, New York, November 1933 to April 1934, no. 31;* **C. Kauffmann.** *Romanesque Manuscripts 1066-1190, A Survey of Manuscripts Illuminated in the British Isles, London, 1975, p. 93-96, fig. 174.*

[15] *Կիլիկյան մանրանկարչության մեջ Հեսսեի ծառը առաջին անգամ հանդիպում է 1270-ական թթ. Վասակ իշխանի Ավետարանի (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի հավաքածու, N 2568) Մատթեոսի անվանաթերթի լուսանցքում: Ապա հայտնվում է նաև Վիեննայի Մխիթարյան միաբանության N 278, ինչպես նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի N 7651 և Հեթում Բ արքայի 1286 թ. Ճաշոցի (Մատենադարան, N 979) հարդարանքում (***S. Der Nersessian,*** *նշվ. աշխ., էջ 95-96, 108-110):*

գլխավորում թագադիրների խումբը[16]: N 9422 ձեռագրի Մատթեոսի անվանաթերթի լուսանցազարդը համապատասխանում է երկրորդ տարբերակին[17]: Հայր Աստծուն հայ արվեստում ներկայացնող օրինակները շատ քիչ են, և այս առումով կարևոր երևույթ է, որ Մատենադարանի N 9422 Ավետարանի ծաղկողը Հայր Աստծու պատկերը ներմուծել է այս տեսարանի մեջ:

Մատթեոսի անվանաթերթի ճակատազարդի և լուսանցազարդի մանրակրկիտ և բարձրաճաշակ կատարումը կասկած չի թողնում, որ ի դեմս այս անվանաթերթի ձևավորման, գործ ունենք իսկական գլուխգործոցի հետ:

Մարկոսի տիտղոսաթերթի (թերթ 107ա)[18] ճակատազարդը եռախորան կառուցվածք ունի, վերևում՝ բյուզանդական եկեղեցիների գմբեթը հիշեցնող ելուստ է, որը հաղթանակած եկեղեցին է խորհրդանշում[19]: Անվանաթերթի վերևի ելուստի՝ գմբեթի, երկու կողմերում շքեղ պոչերով սիրամարգեր են պատկերված: Ձախ կողմի սիրամարգի վիզը շրջված է հակառակ ուղղությամբ: Ըստ ամենայնի, նույն դիրքով էր նաև աջ կողմի սիրամարգը՝ կրկնելով ներքևում գլխազարդի հարդարանքի մաս կազմող եղջերուների դիրքերը: Ճակատազարդի կենտրոնում ծաղկողը համաչափորեն տեղադրել է ճկված մարմիններով և երկար եղջյուրներով եղջերուներին[20]: Մատենադարանի խնդրո առարկա ձեռագրի անվանաթերթի ճակատազարդը ավարտուն տեսք է ստանում սրածայր, ծաղկաձև, եռամաս մուտքային փորվածքի շնորհիվ:

Ուղղանկյան և ելուստի հարդարանքում բուսական նախշային ցանցի մեջ երևում են մարդկային օվալաձև դեմքեր ու կիսադեմեր: Այս յուրահատուկ կիսադեմերը, ըստ տեղադրության, նայում են դիմացի կողմ, այսինքն՝ ձախում պատկերվածները նայում են աջ, աջ կողմինները՝ ձախ,

---

[16] **S. Der Nersessian,** *նշվ. աշխ., էջ 108:*

[17] *Այս երկրորդ տարբերակը ներկայացված է վերոհիշյալ՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության N 278 և Մատենադարանի N 7651 ձեռագրերի պատկերներում: Ի տարբերություն այս մանրանկարներում տոհմածառի հարդարանքում իրարից առանձնացված կերպարների, մեր մատյանի օրինակում նրանք մի ամբողջական և միասնական պատկեր են, որտեղ ոսկե խորքի վրա, ծառի հիմքում նկարված են Քրիստոսի նախահայրերը, իսկ կողքերից՝ մարգարեները:*

[18] *Հավանաբար, Մատենադարանի N 9422 Ավետարանը նորոգելու ժամանակ կազմողները շփոթել են տիտղոսաթերթերի տեղերը և Մարկոսի անվանաթերթը կարել են Ղուկաս ավետարանչի պատկերի հարևանությամբ, իսկ Ղուկասի անվանաթերթը՝ Մարկոս ավետարանչի մոտ:*

[19] **Манукян С.,** *նշվ. աշխ., էջ 122:*

[20] *Բուսական մանրամասների խորքի վրա պատկերված եղջերուն հիշեցնում է Անիի 1215 թ. Տիգրան Հոնենցի կառուցած Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արտաքին հարդարանքում հայտնվող կենդանիների, մասնավորապես եղջերուի պատկերը (տե՛ս* **Jean-Michel Thierry** *et* **Nicole Thierry.** *L'église de Saint –Gregoire de Tigran Honenc à Ani (1215), Louvain, 1993).*

վերևինները՝ ներքև, իսկ ներքևինները՝ վերև: Ինչպես և նախորդ անվանաթերթի ճակատազարդում զետեղված վեղարավոր կամ թագակիր անձինք, այս դեմքերը ևս, անկասկած, նկարված են նույն վարպետի ձեռքով: Օվալաձև և կիսադեմով ներկայացված դեմքերը նույնպես աչքի համար մեծ լարվածություն են պահանջում, և ճակատազարդերի այսօրինակ կատարումը եզակի երևույթ է միջնադարյան քրիստոնեական գրքարվեստում:

Մարկոսի անվանաթերթի կախարդիչ գեղեցկությունը առաջին հերթին ստեղծվում է ցանցաձև զարդարանքի, այդտեղ զետեղված դեմքերի, ճակատազարդի մեջտեղում հերալդիկ ձևով երկու՝ համաչափորեն ներկայացված եղջերուների և ժանեկազարդ եզրագծի համադրության շնորհիվ[21]:

Ղուկասի անվանաթերթի (թերթ 162ա) ճակատազարդը Π*-աձև տեսք ունի, որի ուղղանկյուն՝ մուտքային փորվածքի վերևից կանթեղ է կախված[22]: Այդ մանրամասնը հայտնվում է նաև վերը նշված՝ 1273 թ. Հովասափի ծաղկած Սկևռայի Ավետարանի Ղուկասի անվանաթերթերի ուղղանկյան բացվածքում[23]:*

Ճակատազարդը բաղկացած է հյուսվածքային նախշերով զարդարված հինգ հավասար շրջագծերից, որոնք ծածկված են ցանցային հյուսվածքով: Գլխազարդի վերևում կարմիր կատարներով երկու աքաղաղներ են, որոնք տարբեր դիրքերով են ներկայացված. մասնավորապես իրական կյանքից դիտված շարժումով է աջակողմյանը, որը վիզը շրջած մաքրում է փետուրները: Աքաղաղները մարգարեների և Նոր Կտակարանի առաքյալների՝ առավոտը խորհրդանշող պատկերներ են, իսկ վզի փետուրները մաքրող աքաղաղը մաքրագործվող արդար հոգիների խորհրդանիշն է[24]:

Նկարազարդման աջ լուսանցքում նկարված է կենաց ծառ՝ բազմաթիվ թռչուններով: Ծառի կատարին երկու կաքավների միջև սուրբը Ղուկասն է՝ լուսապսակով և տոնզուրով (գլխի գագաթի սափրած՝ կլոր հատվածը)[25]:

---

[21] **E. Korkhmazian, G. Hakopian, I. Drampian.** *The Matenadaran, Armenian Miniatures of the 13th and 14th Centuries, Leningrad, 1984, fig. 138-139.*

[22] **Մնացականյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 638:*

[23] **S. Der Nersessian,** *նշվ. աշխ., էջ 321:*

[24] **Ղազարյան Վ.,** *Խորանների մեկնություններ, Ե., 1995, էջ 25, 28,* **Манукян С.,** *նշվ. աշխ., էջ 122:*

[25] *Թերևս արժե նշել, որ նմանատիպ ձևով է պատկերված Ղուկասը նաև Հովհաննես եպիսկոպոսի պատվերով ստեղծված 1270 թ. Աստվածաշնչում (Մատենադարան, N 345): Այս մատյանում ավետարանիչները, մասնավորապես Մարկոսը (էջ 668) և Ղուկասը (էջ 718բ) պատկերված են յուրաքանչյուրի գրած Ավետարանի (Ղուկասի պատկերը առկա է միայն Գործք Առաքելոցի հատվածի սկզբում) սկզբում, լուսանցքում կանգնած դիրքով՝ ձեռքին գիրքը բռնած: Ուշագրավ է, որ ինչպես մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող մատյանի անվանաթերթում, այնպես էլ այս Աստվածաշնչում Ղուկասը պատկերված է տոնզուրով: Այս երկու նկարներում տարբերվում է միայն ձեռքերի դիրքը. եթե Մատենադարանի N 9422 մատյանի օրինակում ավետարանիչը ձախ ձեռքով օրհնում է, ապա N 345 Աստվածաշնչում նկարված է գիրքը ամուր բռնած:*

Հովհաննեսի անվանաթերթի (թերթ 248ա) ճակատազարդը կարծես երկու ուղղահայաց, զարդային գոտիների միջև տեղավորված լինի: Հախից սկզբնատառն է, որը միանում է ուղղանկյանը, իսկ աջից՝ լուսանցազարդը:

Տիտղոսաթերթի ճակատազարդը բաղկացած է քառաթև նախշերով ծածկված տասնութ քառակուսիներից, որոնցից յուրաքանչյուրի մեջ եռաթև նախշեր են:

Աջ լուսանցքում պատկերված է Հակոբի ելարանը[26] (Հովհ., Ա 51, նաև Գործք Առաքելոց ԻԸ 10-22): Մանրանկարի ներքևի հատվածում լուսապսակով ալեհեր ծերունի Հակոբն է քնած՝ գլուխը քարին հենած, իսկ վերևում երկար սանդուղքն է[27]: Ելարանի ձախ կողմում բարձրացող յոթ հրեշտակներ են՝ բարուրված երեխաները ձեռքներին, իսկ դիմացից իջնող վեց հրեշտակները առանց մանուկների են: Բարուրված երեխաներով հրեշտակները չեն հանդիպում Հակոբի ելարանի պատկերագրության մեջ, ուստի, այստեղ գործ ունենք բացառիկ երևույթի հետ: Ըստ Ս. Տեր Ներսեսյանի, այստեղ հրեշտակները կապված են աշխարհի արարման օրերի հետ: Հավանաբար, ծաղկողը, այստեղ Հակոբի ելարանի տեսարանը ձևափոխելով, ցանկացել է մի քանի գաղափարներ ներկայացնել[28]:

Երկրից դեպի երկինք տանող աստիճանը աստվածաբանները համարում էին նաև Մարիամի խորհրդանիշը[29]: Բյուզանդիայում Մարիամը համարվում էր նաև «Երկնային ելարան», որի միջոցով Աստված իջավ երկիր և նրա միջոցով էլ նրանց՝ մարդկանց, կարող է բարձրացնել երկինք: Փաստորեն, այս ելարանը խորհրդանշում է Մարիամին և Աստծուն ու նաև մարդուն[30], երկնքի և երկրի կապը[31]:

Հայ մանրանկարիչը «Հակոբի ելարանը»[32] յուրօրինակ ձևով ներմուծել է անվանաթերթի հորինվածքի մեջ և, բացի այդ, ինքնատիպ լուծումներ ու ոճական մանրամասներ հավելել՝ ձևափոխելով թեմայի պատկերագրությունը:

---

[26] Խառան գնալու ճանապարհին Հակոբը կանգ առավ գիշերելու: Երազում նա մինչև երկինք հասնող ելարան տեսավ, որի վրա իջնում և բարձրանում էին հրեշտակները: Վերևից նրան դիմեց Աստված և խոստացավ նրան և իր ժողովրդին՝ հրեաներին, տալ այն հողը, որի վրա Հակոբը պառկած էր: Արթնանալով Հակոբը քարերից մի սյուն կառուցեց և այդ վայրը կոչեց Վեֆիլ, ինչը թարգմանաբար նշանակում է «Աստծո տուն» (**Холл Д.** *Словарь сюжетов и символов в искусстве, М., 1999, с. 250):*

[27] **Th. F. Mathews, R. S. Wieck.** *Treasures in Heaven, Armenian Art, Religion, and Society, New York, 1994, p. 155 ,fig. 71.*

[28] **S. Der Nersessian,** *նշվ. աշխ., հ. I, էջ110-111:*

[29] **L. Ross,** *նշվ. աշխ., էջ 131-132:*

[30] **Бидерманн Ганс.** *Энциклопедия символов, М., 1996, с. 147.*

[31] **Холл Д.** *Словарь сюжетов и символов в искусстве, с. 250.*

[32] *Հայ արվեստում այն հայտնվում է միայն Թորոս Ռոսլինի ծաղկած՝ Վասակ իշխանի Ավետարանի (Վաշինգտոն, Ֆրիր պատկերասրահ, N 32. 18) Հովհաննեսի անվանաթերթի սկզբնատառի հորինվածքում (տե՛ս* **S. Der Nersessian.** *նշվ. աշխ., հ. 2, նկ. 229),* **Helen C. Evans,** *Manuscript Illumination at the Armenian Patriarchate in Hromkla and the West, Ph. D. Dissertation, New York, 1990, p. 129-130;* **L. Chookaszian.** *Decorated Initials of Toros Roslin, Hask Armenological Yearbook, New Series, 2007-2008, Antelias- Lebanon 2009, p. 455-457.*

Մատենադարանի N 9422 Ավետարանի նուրբ լուսանցազարդերը և իրենց նախշերի առանձնահատկությամբ ու ճոխությամբ աչքի ընկնող անվանաթերթերը կիլիկյան մանրանկարչության լավագույն նմուշներից են:

МАРГИНАЛИИ И ТИТУЛЬНЫЕ ЛИСТЫ
ЕВАНГЕЛИЯ ИЗ СОБРАНИЯ МАТЕНАДАРАНА (РУК. N 9422)

ЧУКАСЗЯН С. Л.

Резюме

Маргиналии декорированы растительными орнаментами –рог изобилия, гранаты и цветы. Инициалы имеют форму птиц. Титульный лист Евангелия от Матфея уникален своей заставкой, изображающей головы в золотых головных уборах наподобие головных уборов епископов, а также аллегорическое Древо Джесси, увенчанное изображением Святой Троицы. Заставка титульного листа Евангелия от Марка напоминает купол византийской церкви, а вся поверхность покрыта смотрящими в разные стороны маленькими круглыми человеческими лицами. В правой маргиналии титульного листа Евангелия от Луки – образ евангелиста с кулаком. На титульном листе Евангелия от Иоанна – Лестница Иакова, на которой с правой стороны видны шестеро спускающихся ангелов, слева – семеро ангелов, поднимающихся по лестнице с младенцами на руках, а наверху изображена Святая Троица.

THE MARGINS AND TITLE-PAGES
OF GOSPEL N 9422 IN MATENADARAN

S. CHUKASZYAN

Abstract

The delicate margins consist of plants, horns, images of pomegranates.The initial letters are in the shape of a bird. St. Matthew’s title-page has a unique headpiece decorated with the heads with golden hats that remind the head coverings of bishops. Here we can see also the allegorical Tree of Jesse, which is crowned by the image of Holy Trinity. The headpiece in Mark’s title-page resembles the domes of Byzantine churches and the whole surface is decorated with small round human faces that are looking in different directions. In the right margin of Luke’s title page, the image of the Evangelist is seen shaved in a shape of tonsure. The margin of John’s title page illustrates Jacob’s vision of the ladder, where seven angels, holding infants in swaddling clothes, ascending the ladder and six angels from the left side of the miniature are descending without children and the Holy Trinity dominates the top.